Տեղեկանք

«Հայաստանի Հանրապետության կառավարության և Ռուսաստանի Դաշնության կառավարության միջև Հայաստանի Հանրապետություն բնական գազի, նավթամթերքների և չմշակված բնական ալմաստների առաքման ոլորտում համագործակցության վերաբերյալ 2013 թվականի դեկտեմբերի 2-ի՝ Համաձայնագրում փոփոխություններ կատարելու մասին» Արձանագրության ստորագրման նպատակահարմարության մասին

Հայաստանի Հանրապետության կառավարության և Ռուսաստանի Դաշնության կառավարության միջև Հայաստանի Հանրապետություն բնական գազի, նավթամթերքների և չմշակված բնական ալմաստների առաքման ոլորտում համագործակցության վերաբերյալ 2013 թվականի դեկտեմբերի 2-ի՝ Համաձայնագրի 8-րդ հոդվածի համաձայն Համաձայնագրում կարող են կատարվել փոփոխություններ՝ ձևակերպելով առանձին Արձանագրությամբ:

Սույն Արձանագրությամբ համապատասխան փոփոխություններ են կատարվում Համաձայնագրի մի շարք հոդվածներում.

Ռուսաստանի Դաշնությունից Հայաստանի Հանրապետություն առանց մաքսատուրքի գանձման մատակարարվող ապրանքների ցանկում ավելացվում են նավթամթերքների հետևյալ տեսակները ՝

. ավտոմոբիլային բենզին (ծածկագիր՝ ԵԱՏՄ ԱՏԳ ԱԱ 2710 12 450 0 և 2710 12 490 0), դիզելային վառելիք (այլ նպատակների համար միջին թորվածքներ, այլ, ծածկագիր՝ ԵԱՏՄ ԱՏԳ ԱԱ 2710 19 290 0), ռեակտիվ շարժիչների բենզինային վառելիք (ծածկագիր՝ ԵԱՏՄ ԱՏԳ ԱԱ 2710 12 700 0),

. նավթային գուդրոն (ծածկագիր՝ ԵԱՏՄ ԱՏԳ ԱԱ 2710 19 150 0):

Սույն Արձանագրության ստորագրումը կնպաստի երկու երկրների միջև փոխշահավետ համագործակցության, տնտեսական կապերի զարգացման համար բարենպաստ պայմանների ստեղծման, գործարար ակտիվության բարձրացման շարունակմանը:

Առաջնորդվելով «Միջազգային պայմանագրերի մասին» ՀՀ օրենքի դրույթներով՝ ՀՀ էներգետիկ ենթակառուցվածքների և բնական պաշարների նախարարությունը նպատակահարմար է գտնում «Հայաստանի Հանրապետության կառավարության և Ռուսաստանի Դաշնության կառավարության միջև Հայաստանի Հանրապետություն բնական գազի, նավթամթերքների և չմշակված բնական ալմաստների առաքման ոլորտում համագործակցության վերաբերյալ 2013 թվականի դեկտեմբերի 2-ի՝ Համաձայնագրում փոփոխություններ կատարելու մասին» Արձանագրության ստորագրումը Հայաստանի Հանրապետության կողմից:

ՀՀ էներգետիկ ենթակառուցվածքների
և բնական պաշարների նախարար /Ա. Մանուկյան